

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՋՐՕՐՀՆԵՔԻ ԿԱՆՈՆԻ ՀԱՏԱՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱՑՈՒՅՑՈՒՄ

Գևորգ Ղուշյան

Հայ Եկեղեցին ձգտել է անաղարտ պահել Ս. Քաղաքի Մայր Եկեղեցու և Փրկչի ծննդավայրի ավանդությունները, ի մասնավորի, կապված Աստվածհայտնության տոնի օրվա և տոնակատարման կարգի հետ¹: Հայտնի է մի շարք աղբյուրներով (նաև Հայ Եկեղեցու պահպանված ավանդույթով), որ Աստվածհայտնության ծիսական արարողությունները սկսվել են հունվարի 5-ին՝ ժամը 16-ին:

451 թ.՝ Քաղկեդոնի ժողովի ժամանակ, Արև դիցի տոնակատարությանը վերջ տալու համար, Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը սահմանեց որպես Հիսուսի Ծննդյան օր: Կաթոլիկ եկեղեցին հունվարի 6-ին կատարում է Մկրտության տոնը²:

Ա. Մանուկյանը մեկ այլ, արդեն քննարկված փաստարկ էլ է նշում Ծննդյան ամսաթվի փոփոխման հետ կապված. «...Պաղեստինում, տեղացիների և ուխտաւորների մասնակցութեամբ, Բեթղեհէմում, մթնշաղին, տօնակատարում էր Ս. Ծնունդը. նոյն օրը տեղի էր ունենում նաև Մկրտութեան տօնախմբութիւնը Յորդանան գետում: Երթևեկության համար այժմեան միջոցները չկային, ձմեռային եղանակին Բեթղեհէմից մինչև Յորդանան գետը ճանապարհորդութիւնը այնքան էլ հեշտ չէր: Այս էլ նպաստեց, որ դեկտեմբերի 25-ին կատարուի Ս. Ծննդեան տօնը և Յունուարի 6-ին՝ Մկրտութիւնը»³: Վերը տեսանք, որ այս փաստարկը ներկայացնում է նաև Մ. Օրմանյանը:

Սահակ կաթողիկոսի խմբագրած «Կանոնք ընթերցվածոց»-ում ևս Սուրբ Ծնունդը սահմանված է հունվարի 6-ին. «Տաւն սրբոյ Ծննդեան և Յայտնութեանն կատարի Յունուարի 2 (6)»՝ ութօրյա կանոնով⁴: Հայոց առաջին տոնացույցում տոնական տարին սկսվել է հունվարի 6-ով: Այդ

¹ **Տե՛ս Գ. Ղուշյան**, Սուրբ Ծննդյան կանոնի հաստատումը հայոց տոնացույցում, «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու», Դ, Երևան, ԵՊՀ հրատ, 2020, էջ 7-23:

² **Ա. Մանուկեան**, Հայ Եկեղեցու տօները, Թեհրան, 1994, էջ 41-43:

³ Նոյն տեղում, էջ 43:

⁴ **Ռ. Վարդանյան**, Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, էջ 40:

ավանդույթը, հետագա որոշակի շեղումներով, պահանվեց հայոց տոնացույցի հետագա դարերի խմբագրություններում¹: Սահակ կաթողիկոսը V դ. 20-ական թթ. Հուլյան տոմարը վերջնականապես ներդրեց հայոց եկեղեցական տոնական տարվա մեջ, և այդ ավանդույթը շարունակվեց հետագայում: Հայոց և Հուլյան տոմարները զուգահեռաբար գործածվել են հայոց մեջ²: Հայոց համար կարևորն այն է, որ եկեղեցական տոնացույցի տարին հիմնվեց հուլյան տոմարի վրա՝ տարեսկիզբը նդունելով հունվարի 6-ը³:

Թեև պաշտոնապես հունվարի 6-ը, որպես եկեղեցական տոնական տարվա սկիզբ, հաստատվեց Սահակ կաթողիկոսի կողմից, սակայն հավանական է, որ Ծնունդը հունվարի 6-ին տոնում էին ավելի վաղ: Այդ մասին վկայում են «Կանոնք ընթերցվածոց»-ը, Անդերասի 200-ամյա Տոմար-Տոնացույցի տվյալները, Եփրեմ Ասորու չորս ավետարանների համաբարբառի մեկնության թարգմանությունը, որտեղ ասվում է. «Եւ ծնաւ նա (Քրիստոս – Ռ. Վ.)», որ օր վեց էր Քաղոց / = Հունվար/ ամսոյ ըստ յունարէն թուոյ»⁴:

¹ Նույն տեղում, էջ 43:

² Գրիգորյան տոմարը՝ «Տոմար Գրիգորիեանն յալիտենական որ եղև իշխանութեամբ հզոր սրբոյ փափոյն և այլ թագաւորանցն», անմիջապես հայերեն է թարգմանվել Հովհաննես Տերզնցու և նրա որդի Խաչատուրի կողմից, սակայն սկզբնական շրջանում գործածության մեջ է դրվել հայ փոքրաթիվ կաթողիկ համայնքների կողմից (տե՛ս **Ք. Թումանյան**, Հայ աստղագիտության պատմություն, (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբ), Երևան, 1964, էջ 89):

³ **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 44: Հուլյան տոմարի ընդունումը նպաստեց ոչ միայն ժամանակամիջոցի ճշգրտմանը, այլև՝ արևադարձային տարուց դեպի տիեզերական տարվա անցնելուն: Դրա հետ կապված՝ Ամանորը մարտից տեղափոխվեց հունվար: Այս փոփոխությունները կապված էին տիեզերական շատ կարևոր իրադարձության հետ. Ք.ա. I դ. պրեցեսիայի հետևանքով գարնանային օրահավասարի օրը արևը մտնում է ոչ թե Խոյ համաստեղության մեջ, ինչպես մինչ այդ էր, այլ՝ Ձուկ: Քանի որ հետագայում փոխվում է նաև թվականության սկզբունքը, և նոր թվարկությունը կապվում է Քրիստոսի և քրիստոնեության հետ, ուստի ձկան համաստեղության նշանը կապվում է Քրիստոսի կերպարի հետ: Գնոստիկները [] [] հունարեն բառը մեկնաբանում են որպես հապավում՝ Հիսուս Քրիստոս Աստծու Որդի Փրկիչ, իսկ վաղ քրիստոնյաները երթերի ժամանակ տանում էին ձկան պատկերով դրոշը (տե՛ս **Լ. Սիմոնյան**, Տոմարային ծիսաշար, Տոմար. Ձմեռ. Նորի տարի և Սուրբ Ծնունդ, հ. Ա, Երևան, 2006, էջ 99):

⁴ **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 95: Աղբյուրը՝ Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հ. Բ, Վենետիկ, 1836, էջ 18-19:

Քրիստոսի Ծնունդն ու Աստվածհայտնությունը հունվարի 6-ին միաժամանակ տոնելու սովորությունը խախտվեց և երկու տոնական օրվա վերածվեց հավանաբար Սահակ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի մահից հետո: Ծնունդը տոնվեց դեկտեմբերի 25-ին, Մկրտությունը՝ հունվարի 6-ին, մինչև Հովհան Մանդակունի կաթողիկոսի կարգադրությունը¹:

Ռ. Վարդանյանը, հիմնվելով Եղիշեի մի վկայության վրա, որը վերաբերում է հայոց եպիսկոպոսների կողմից հայոց բոլոր հաջողությունների վերաբերյալ Կոստանդնուպոլիս գիր ուղարկելուն, որպեսզի նրանք ևս աղոթք անեն և Աստծուն խնդրեն, որ հայերն սկսած գործը հաջողությամբ ավարտեն՝ հույներին խնդրելով, իբրև հավատակիցներ աղոթել իրենց համար, պարզել է, որ Ծնունդը նշել են դեկտեմբերի 25-ին, իսկ Աստվածհայտնությունը՝ հունվարի 6-ին՝ 445-ից մինչև 480-ական թթ. ընթացքում:²:

480-ական թթ. սկզբներին, եթե ոչ 470-ականների վերջերին, Հովհան Մանդակունին վերականգնեց Ծնունդն ու Աստվածհայտնությունը հունվարի 6-ին տոնելու հին ավանդույթը: Նա իր կանոնների 9-րդ կետում գրում է. «Եւ որ ծնունդ առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան, զի սուտ է, զի Ծնունդ և Յայտնութիւնն մի են եւ յայտ յայտ յընթերցուածոցն է, որ ասէ՝ «Յիսուս Քրիստոսի Ծնունդն էր այսպես» (Մատթ., Ա 18)»³:

Ինչպես նկատել է Ռ. Վարդանյանը, Հովհան Մանդակունին առաջին անգամ հղում է հնագույն «Կանոնք ընթերցվածոց»-ի համապատասխան ընթերցվածը՝ հիմնավորելու համար հունվարի 6-ին Ծնունդն ու Աստվածհայտնությունը միաժամանակ կատարելը:

Բացի Մանդակունու կանոնից, առկա են նաև Շիրակացու տեղեկությունները, որոնք փաստում են տոնը հունվարի 6-ին նշելը վերականգնելու մասին⁴:

Ռ. Վարդանյանը նկատում է, որ Շիրակացին Մանդակունուն է վե-

¹ Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 95:

² Նույն տեղում, էջ 96:

³ Նույն տեղում, էջ 105: Աղբյուրը՝ Կանոնագիրք հայոց, աշխ.՝ Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 449:

⁴ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 289:

րագրում Ծնունդն ու Մկրտությունը հունվարի 6-ին կանոնելու առաջնությունը՝ օգտվելով նրա խմբագրած «Կանոնք ընթերցվածոց»-ից և կանոններից, սակայն այն սահմանել էր Սահակ կաթողիկոսը, իսկ Մանդակունին վերականգնեց այն¹:

VI դ. կեսերին Հայտնության տոնը նշվել է հունվարի 6-ին. «Տաւն Սրբոյ Յայտնութեանն (հունվարի 6)»²:

547 թվականին «Տաւն սրբոյ յայտնութեանն» տոնվել է անշարժ տոնական օրով՝ հունվարի 6-ին և համարվել է եկեղեցական տարվա սկիզբ: Դա հիմնավորվում է «Կանոնք ընթերցվածոց»-ի, Անդրեասի 200-ամյա տոմար-Տոնացույցի, Եփրեմ Ասորու Համաբարբառի, Հովհան Մանդակունու «Կանոնք ընթերցվածոց»-ի 2-րդ խմբագրության ու կանոնների տվյալներով³:

Հովհաննես Գաբեղենացին VI դ. 60-ական թթ. գրեց Ծննդյան և Աստվածհայտնության տոնի մեկնությունը, որտեղ նույնպես տարվա սկիզբ է համարում հունվարի 6-ը և փաստում է Ծնունդը և Աստվածհայտնությունը միասնաբար տոնելու տրամաբանությունը⁴: Այն հիմնավորվում է նաև Մովսես եպիսկոպոսի՝ 604-607 թթ. վերաբերող տեղեկությամբ⁵:

Եզր կաթողիկոսից սկսած՝ հայոց տոնացույցում կատարվել են խմբագրություններ, և «Կանոնք ընթերցուածոց»-ը փոխարինել էին «Արտեմոնադիր ընթերցուածոց»-ով, այսինքն՝ ընդունել էին հունական եկեղեցու կողմից տոնվող մի շարք տոներ, այն է՝ Քրիստոսի Ծնունդը տոնում էին դեկտեմբերի 25-ին, Աստվածհայտնությունը՝ հունվարի 6-ին ևն⁶: Կի-

¹ Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 105:

² Նույն տեղում, էջ 109:

³ Նույն տեղում, էջ 110:

⁴ Նույն տեղում, էջ 110: Աղբյուրը՝ Գիրք թղթոց, էջ 85-59:

⁵ «Արդ՝ որպէս առաք պատուէր ի սուրբ հարցն ոչ հաղորդել անխտիր ընդ ամպարիշտս, և ոչ միաբանել և զուգել տաւն մեծի զատկին ընդ հրեայսն և ընդ անուանեալ Կաթարոսսն, նոյնպէս և յաղագս միաւորական տաւնին Յայտնութեան, որ է հրաշափառ ամենասուրբ ծնունդն յունուարի ամսոյ ի վեցն կատարեալ, զոր կանոնեալ հին ընթերցուածոց: Վասն զի մի ար դիպեցաւ Ծնունդն և Մկրտութիւն եւ ոչ հաւասարել ընդ նոսա, և ոչ ընդ մեզ հաղորդել հաւատով» (տե՛ս Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 110-111: Աղբյուրը՝ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 124-25):

⁶ Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 199:

րակոս Գանձակեցին վկայում է, որ Եզրը “զամենայն ուղղափառ կարգա-տրութիւնս եկեղեցւոյ, և զընթերցուածն Յակոբայ և Կիրղի, փոխանակ այնորիկ զԱրտեմոնին եղեալ, զոր յանդիմանեաց Սուրբ վարդապետն Յոհան...»¹: Իսկ Օձնեցին “Կարգեալ ընթերցուածն սրբոյ Յակոբայ և Կիրղի և զամենայն տօնսն՝ որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի և տօնեցին ի ԻԵ դեկտեմբերի Դաւթի Մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան Տեառն տօնեին...»²:

Մշո ճառնտիրում, որում պահպանվել են 5-8-րդ դդ. “Կանոնք ընթերցուածոց»-ների խմբագրությունները, սկսվում է այսպես. «Ի մեծի աւուր Ճրագալուցին Ծննդեան եւ Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» այսինքն՝ հունվարի 5-ի գիշերվա կանոններով: Այնուհետև պահպանվել են «Գ արն», «Ե-րդ արուր», «Ձ-երորդ արուրն», «Է-րդ արուրն», «Ը-րդ ար»: Ծննդյան ութօրյա տոներից հետո գրված է. “Կատարեցաւ կարք ընթերցման գիշերային պաշտման Մեծի Ծննդեան եւ Յայտնութեան մերոյ Յիսուսի Քրիստոսի ճառ ԿԴ»³:

Ատոմ Վարագեցու Հոռոմադիբում (998 թ.) Ծնունդը հունվարի 6-ին է. “Տաւն սրբոյ Յայտնութեանն կատարի Յունարի Զ...»⁴:

Գրիգոր Վկայասերի տոնանամակում նշված է. «Յունուարի Ե. Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի /ցանկում՝ Ներին Ե. ճրագալոյց/...

Նորին Զ Յայտնումն Քրիստոսի /ցանկում/»⁵:

752 թվահամարի տոնացույցում (1351 թ.) տրվում են Ծննդյան և Աստվածհայտնության ութ օրերի կանոնները, որտեղից հետո բացատրում է. “Տաւնք ըստ Ը արեկիցն որ լինի յայս միջոցս կա որ յաւելու և կա որ պակասի, թէ շատ է դու ԱԱ տաւնեա, և թէ նուազ՝ ԲԲ և ԳԳ, որ վճարի: Յետ Ը արեկիցն Պետրոսի Հայր[ապետի] և Աբիսողոմա սարկաւագին,

¹ Նույն տեղում, էջ 142: Աղբյուրը՝ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 54-55:

² **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 142-43: Աղբյուրը՝ **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 67-70:

³ **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 211: Աղբյուրը՝ **ՄՄ**, ձեռ. 7729, 205 թերթ, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեթունյան, Փ. Անթաթյան, Եր., 1970, էջ 597-599:

⁴ **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 228:

⁵ Նույն տեղում, էջ 271:

ապա Անտոնի անապատական ...» (թերթ 515):

Տեսանք, որ Ծննդյան և Աստվածհայտնության տոնական ութ օրերը՝ հունվարի 6-13-ը, կատարում էին հնագույն շրջանից սկսած: Այդպես շարունակվեց նաև հետագայում, չհաշված որոշ ժամանակավոր ընդհատումների: Հունվարի 6-ը համարվել է տոնական տարվա սկիզբ և ոչ մի փոփոխության չի ենթարկվել¹:

Հետագայում ևս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր տեղական ժողովներով և կանոնագրքով հաստատագրված որոշումներով ճանաչել է Ս. Ծնունդը՝ իբրև Աստվածհայտնություն և Մկրտություն, որովհետև Քրիստոսի Մկրտությամբ է, որ ի հայտ է գալիս Նրա Աստվածությունը:

Այսպիսով՝ Հայ Եկեղեցին Հիսուսի Ծնունդը դիտարկել է ոչ իբրև մեկ առանձին իրադարձություն, այլ իբրև մի այնպիսի խորհրդավոր սկիզբ, որն իր մեջ արդեն իսկ կրում է հետագա բոլոր խորհրդական իրադարձությունները, որոնք նախատեսված են Հայր Աստծուց և կատարվում են հանուն մարդու փրկագործության: Հայոց ծիսակարգի համեմատությունը Երուսաղեմի Մայր Եկեղեցու ծիսակարգի հետ ցույց է տալիս այդ ըմբռնման հնությունն ու անվրեպությունը, որով Փրկչի Ծնունդը դիտարկվում է ավետարանական իրադարձությունների ծիրում, այդպիսով՝ ամբողջանում և դրսևորվում իր ողջ բազմափայլ ճառագայթումով և իրենով իսկ լուսավորում հետագա բոլոր իրադարձությունների խորհրդական խորքը:

Փրկչի Ծննդյան իր ըմբռնումով, որը հստակորեն արտահայտված է տոնակատարման ծիսակարգում, Հայաստանյայց Եկեղեցին հավատարիմ է մնացել երեք տիեզերաժողովների (Նիկիա՝ 325 թ., Կ. Պոլիս՝ 381 թ., Եփեսոս՝ 431 թ.) որոշումներին, ինչպես նաև Եկեղեցու հայրերի սուրբգրային մեկնություններին: Վերջինիս ցայտուն մեկ օրինակը կարող է համարվել Ս. Գրիգոր Սքանչելագործի (210-270 թթ.) խոսքը՝ ասված Քրիստոսի Ծնունդի առիթով, որում Ծնունդը բնութագրվում է Աստծո հայտնություն. «Ուրախութեան այս օրը՝ Էն Աստված եկաւ ծնուելու եւ եղաւ ինչ որ չէր: Վասնզի Աստուած էր եւ եղաւ մարդ՝ առանց տապալուե-

¹ Նույն տեղում, էջ 424:

լու իր Աստուածութենէն. եղաւ մարդ եւ մնաց Աստուած»¹:

Տոնն իր արարողակարգով ինքնին ծէս է, որի բոլոր բաղադրիչները խորհրդական նշանակություն ունեն. տոնի պատճառը, տոնի կատարման կերպը և ժամանակը՝ օրը, տոնին պատշաճեցված ընթերցվածքներն ու շարականները, տոնի հետ առնչվող ժողովրդական սովորույթները և այլն: Այս առումով բացառություն չէ նաև Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնը ևս, որը սերում է դեռևս առաքելական շրջանից և իր մեջ պարունակում է, մասնավորաբար, Բեթղեհեմյան ավանդությունների շատ տարրեր: Տոնի կանոնացումը կապված է Ընդհանրական Եկեղեցու հանդես գալու (I դ.), սուրբ հայրերի (Աթանաս Ալեքսանդրացի, Կյուրել Երուսաղեմացի, Եվսեբիոս Կեսարացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի և ուրիշներ) մատենագրական-չատագովական գործունեության, Տիեզերական ժողովների (հայերի համար՝ Նիկիայի՝ 325թ., Կ. Պոլսի Բ տիեզերաժողովի՝ 381 թ., Եփեսոսի Գ տիեզերաժողովի՝ 431 թ.) դավանական վճիռների ու որոշումների (կանոնների), Գրիգոր Ա Լուսավորչի, ապա՝ Հայ Եկեղեցու հետագա մյուս գործիչների գործունեության հետ:

Տոնը, առհասարակ եկեղեցական ծեսը, որը հայոց մեջ նախապես կատարվում էր հունական և ասորական առաքելական ու սրբազան ավանդությունների համաձայն, հետզհետե հայացվել է, օժտվել ազգային ինչ-ինչ բնութագրականներով՝ սուրբ թարգմանչաց գործունեության շնորհիվ: Ծեսի (տոնի) խորհուրդը կազմող շարականների, աղոթքների և դասավորման առումով մեծ ներդրում ունեն Սահակ Ա Պարթև կաթողիկոսը, Մեսրոպ Մաշտոցը, Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսը (V դ.), հետագա շրջանի (VIII-XII դդ.) գործիչները՝ Ստեփանոս Սյունեցին, Հովհաննես Գ Օձնեցին, Խոսրով Անձևացին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին ու մյուսները:

Ինչ վերաբերում է Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնին, ինչպես նշվեց, այն վաղագույն հիմքեր ունի, սակայն դրա կարգավորության հիմնադիրը, ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչն է, ապա և Սահակ Պարթևը:

Ս. Ծնունդը պատկանում է անշարժ տոների թվին: Անշարժ են հուն-

¹ Երանելի Գրիգոր Սքանչելագործի խօսքը Քրիստոսի Ծնունդին մասին, Նիւ Եորք, 1991, էջ 2:

վարի 5-ը (որպես Ճրագալույց Ս. Ծննդյան), հունվարի 6-ը (Ս. Ծնունդ և Աստվածհայտնություն), հունվարի 7-ից 12-ը (որպես Ս. Ծննդյան յոթնյակ կամ ութօրեք), հունվարի 13-ը (Անվանակոչություն) և մի շարք այլ տոնական օրեր: Հայկական ծիսամատյանները (Տոնացույց, Տոնապատճառ), հետևելով հնօրյա ավանդույթին, տոնը մշտապես նշանակում են հունվարի 6-ին:

Հարց է ծագում, թե ինչո՞ւ են հատկապես Հարության ճրագալույցին բնորոշ երեք ընթերցվածները մուտք գործել Աստվածհայտնության տոնի ծիսական արարողակարգ:

Շ. Ռընուն տալիս է հետևյալ հստակ հիմնավորումները ¹.

- ա) Հարությունը տոների տոնն է, այն առումով, որ Հիսուսի մարդեղության և տնօրինական փրկագործությունների խորհուրդը հասցրեց իր հաղթական լրումին՝ հրաշափառ Հարությանը, ուստի և Հիսուս Քրիստոսի Ծննդյան խորհուրդը, ի վերջո, ամբողջանում է Հարությամբ:
- բ) Փրկչական խորհուրդների սկիզբ հանդիսացող Քրիստոսի Ծնունդը կարապետն է Հարության խորհրդի:
- գ) Զատկական ճրագալույցի արարողակարգից փոխառնված նշյալ երեք տեքստերի ընթերցումը Աստվածհայտնության ճրագալույցի ընթացքում նպատակ ունի բացահայտելու Աստվածհայտնության և Հարության (Զատկի) միջև եղած կապը, այն, որ Տիրոջ երկրավոր կյանքի որևէ իրադարձություն չէր կարող երբեք զատված լինել Տիրոջ Հարությունից՝ զատկական խորհրդից:

Այո, քանի որ Փրկչի երկրային կյանքի որևէ դրվագ չէր կարող անջատ լինել ոչ միայն փրկագործության իրականացումից՝ Հարությունից, այլև Փրկչի կյանքի ու փրկագործ տնօրինությունների հետ կապված մյուս իրադարձություններից՝ ս. Կոյս Մարիամին տրված հրեշտակային ավետումից, Ս. Կոյսի Եղիսաբեթին կատարած այցից, ութօրյա մանուկ Հիսուսի թլփատումից, Հիսուսի՝ Հորդանանում մկրտվելուց և այլն: Ուստի և տոնի կատարման ընթացքում հիշատակվում են նաև ավետարանական այդ դրվագները՝ ցույց տալու համար Փրկչի Ծննդյան խորհրդի

¹ Շ. Ռընու, Աստվածայտնութեան տօնը Երուսաղէմում Դ եւ Ե դարերում՝ ըստ Երուսաղէմի հայկական Ճաշոց գրքի, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Երեւան, 1996, թիվ 2, էջ 170-171:

ողջ հրաշքը ու անհունությունը՝ իբրև բոլոր սուրբ խորհուրդների սկիզբը:

Սակայն բացառված չէ, որ Քրիստոսի Ծննդյան տոնակատարումն ունենա ավելի վաղ ծագում՝ ընդհուպ մինչև I – II դդ.՝ առաքելական շրջան, թեև Ծննդյան տոնակատարման առաջին հիշատակումները երևան են գալիս III դարից:

Համաձայն այլաբնույթ աղբյուրների, հայոց առաքյալ Թադեոսը («...Ղեբեոս, որ Թադեոս կոչվեց...», Մատթ., Ժ 3)՝ Քրիստոսի տասներկու աշակերտներից մեկը, I դ. (43-66 թթ.) քրիստոնեություն է քարոզել Հայաստանում¹: Հայոց մյուս առաքյալը՝ Բարդուղիմեոսը, ընդունված տեսակետի համաձայն, Հայաստանում քրիստոնեություն է քարոզել 60-68 թթ.: Այդ մասին վկայում են նաև ասորական աղբյուրները²: Իսկ դա նշանակում է, որ նրանք խոսել են նաև Քրիստոսի սքանչելի Ծննդյան մասին, գուցեև ինչ-ինչ կանոններ թողել: «Կանոնագիրք Հայոց»-ում առկա են Թադեոսին վերագրվող անվավեր կանոններ՝ «Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի ի քաղաքն Ուռհա ի լուսաւորել զնոսա»³, որոնք պարունակում են քրիստոնեական կենցաղավարության սկզբունքներ և ճանաչողական նշանակություն ունեցող սահմանումներ, որոնք, թեկուզ անուղղակի, չէին կարող կապ չունենալ Աստվածհայտնություն (Ս. Ծնունդ) հասկացողության հետ: Կամ խոսելով Տիրոջ Հարության և մեռելների հարության մասին, ինչպես հայտնում է մատենագրական մեկ այլ միավոր՝ «Սրբոյն Թադէոսի առաքելոյն վասն յարութեան մեռելոց»⁴,

¹ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, գիրք Բ, ԼԳ, Երևան, 1991, էջ 157: **Յայսմաւորք**, Կ. Պոլիս, 1706, էջ 343-346: **Յայսմաւորք**, Կ. Պոլիս, 1834, մաս 1, էջ 63-70, մաս 2, էջ 302-303: Վկայաբանութիւն եւ գիտ նշխարաց Ս. Թադէի առաքելոյ եւ Սանդիստոյ կուսի, Սուփերք հայկականք, հ. 8, Վենետիկ, 1853, էջ 85-96: **Ղևոնդ Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 47: **Ե. Դուրեան**, Ուսումնասիրութիւնք եւ քննադատութիւնք, Երուսաղէմ, 1935, էջ 31-33 և այլն:

² **Հ. Մելքոնյան**, Ասորական աղբյուրները հայ եկեղեցու մասին, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, 1978, է, էջ 51-56, 1978, Ժ-ԺԲ, էջ 173-177:

³ Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 19-40: Հարկ է նշել, որ ըստ ուսումնասիրողների՝ Թադեոս առաքյալ անունով հայտնի կանոնները նրան չեն պատկանում: Դրանք Կանոնագիրք են ներմուծվել Հովհան Օձնեցու խմբագրությունից հետո, մինչև IX դ. ներառյալ (տե՛ս Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ XLIII- XLVI):

⁴ Սրբոյն Թադէոսի առաքելոյն վասն յարութեան մեռելոց, Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, հ. Գ, Անկանոն գիրք առաքելական, Վենետիկ, 1904, էջ 462-463:

առաքյալը չէր կարող զանց առնել Քրիստոսի Հարության անդրանիկ հանգրվանը՝ Ս. Ծնունդը:

Նրա մասին վկայում են մի շարք աղբյուրներ՝ «Վկայութիւն սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի»¹, «Գիտ նշխարաց սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի»² և այլն, որոնց թվում նաև ասորական ու լատինական աղբյուրները:

Այս ամենն ասվեց՝ ընդգծելու համար հույժ կարևոր այն պարագան, թե Քրիստոսի Ս. Ծնունդը, որը Արևելյան եկեղեցիներում մինչև IV դ. կապվել է Աստվածհայտնության (=Մկրտության) տոնի հետ և նշվել հունվարի 6-ին (որը և ավանդաբար շարունակում է Հայ եկեղեցին), չէր կարող առաքելական հիմք և հիմնավորում չունենալ:

Այս ամենը խոսում է Քրիստոսի երկու ծնունդների մասին. առաջինը (վերևի ծնունդը) նախահավիտյան Բանի ծնունդն է ժամանակներից առաջ, որն արձագանքում է Հովհաննեսի Ավետարանին՝ «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Հովհ., Ա 1), երկրորդ ծնունդը՝ Ս. Կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգով, որով նախահավիտյան Բանը, որ Աստված էր, մարդ եղավ և իր մարդեղության ընթացքին, ինչպես և նախասահմանված էր, կոչվեց Հիսուս (Փրկիչ) Քրիստոս (Օծյալ): Բանի մարդեղացումը (կարելի է պայմանականորեն ասել՝ Հիսուսացում կամ Քրիստոսացում) Աքանջելագործն անվանում է շնորհ, որն, անշուշտ, ձայնակցում է Պողոս առաքյալի շնորհի վարդապետությանը³: Աքանջելագործն ասում է. «Ո՛վ անհասկանալի եւ սքանչելի շնորհք. Միածինը, որ յաւիտենականութենէն առաջ կար՝ անշօշափելի եւ պարզ, անմարմին եւ անյօղ, եկաւ մտաւ ապականացու⁴ մարմինէն ներս, որպեսզի յայտնուի եւ երեւի»⁵: Գործածված երկու բառերը՝ հայտնվել և երևալ, ընդգծում են Ս. Ծննդյան իսկապես Աստվածհայտնություն լինելը:

¹ Յայսմաւորք, Վենետիկ, 1706, էջ 304-307:

² Վկայաբանութիւն սրբոց առաքելոյն Բարդուղիմէոսի, Գիտ նշխարաց սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի, Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, հ. Գ, Անկանոն գիրք առաքելականք, էջ 333-352, 365-368:

³ **Գրիգոր Աքանջելագործ**, նշվ. աշխ., էջ 3-5:

⁴ «Ապականացու» ասելով՝ նկատի ունի, որ ս. Կոյսը Ադամի սերնդից էր, բայց որի ադամական բնույթը մաքրագործվում է Հրեշտակի ողջույնից հետո («Ուրախ լեր, բերրեալը») և դառնում մաքրագործյալ անոթ՝ Բանի մարմնավորման համար:

⁵ **Գրիգոր Աքանջելագործ**, նշվ. աշխ., էջ 4:

Իսկ եթե Աստված էր հայտնվել, ապա, բնականորեն և հաջորդաբար, պիտի տեղի ունենային սքանչելահրաշ այդ Ծնունդով պայմանավորված մյուս խորհրդրդագործությունները, որոնք մարգարեացված էին և կատարվում էին ըստ Ավետարանների: Ծնունդը, Շնորհի և Աստվածհայտնություն լինելուց բացի, նաև անճառելի Հրաշք էր: Սքանչելագործը մեջբերում է Եսայի մարգարեի խոսքը. «Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ» (Եսայի, Է 14), որը հավաստում է, որ, իրոք, Ծնունդը նշան էր, Աստվածային հրաշք, որը տրված չէ հասկանալու, այսինքն՝ անճառելի է, ինչպես ընդունում են սուրբ հայրերը (և Գրիգոր Սքանչելագործը), ինչպես ընդունում է նաև հայ քրիստոսաբանական միտքը: Դա նույնպիսի հրաշք է, ինչպես Հիսուսի՝ ծովի վրայով քայլելը, հացը բազմացնելը, մեռյալին հարություն տալը և Տիրոջ կատարած մյուս հրաշքները:

Հետագա ժողովներում՝ Քաղկեդոնի և այլն, Արևմտյան Եկեղեցիները սկսեցին քննարկել Աստծո կատարած հրաշքը՝ Աստծո մարդացումը. ինչպե՞ս մարդացավ Բանն Աստված, ինչպե՞ս սահմանափակվեց Անսահմանը. Մարդ լինելով՝ միավորվեց նրա հետ, որպես մարմին, հոգի և միտք, թե՞ մտքի տեղը գրավեց Լոգոսը կամ Բանը (ինչպես ժամանակին ասում էր Ապողինար). Աստված միայն երևոյթով մարդ եղավ (երևութականորեն), թե՞ իսկապես ունեցավ մեկ բնույթ, թե՞ երկու՝ աստվածային և մարդկային և այլն, և այլն: Հարցերի շրջանակը գնալով ընդլայնվում էր, և քրիստոսաբանական հարցի քննարկման շուրջ տեղի ունեցան բաժանումներ: Հայ Եկեղեցին, ըստ էության, ընդունեց ու պահպանեց Շնորհի, Հայտնության և Հրաշքի վարդապետությունները, որոնք բխում են բուն Աստվածաշնչի ոգուց, առաքյալների և սուրբ հայրերի ուսուցումներից: Անխաթար պահելով Նիկիո Հավատո Հանգանակը¹ Հայ Եկեղեցին դա-

¹ Հայ Եկեղեցում կանոնացվել և պահվում են նաև այլ հանգանակներ (տե՛ս **Շահե աղբ. Աճեմյան**, Հաւատոյ հանգանակ, Դաւանանք Հայ Եկեղեցոյ, Ս. Էջմիածին, 2001), մասնավորապես՝ Առաքելական հանգանակը, որը ավանդության համաձայն, թելադրել են առաքյալները, Մկրտության հանգանակը և այլն: Երուսաղեմի հին Հավատո հանգանակը մեզ հասել է Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետի շնորհիվ՝ 350 թ.: Հետևելով Արևելյան ավանդությանը՝ Հայ Եկեղեցին հավատարիմ է մնացել Երուսաղեմյան հանգանակին: Հայոց Եկեղեցու Հավատո հանգանակները Քրիստոսին դավանում են որպես Բանն Աստվածը, որը էությամբ նույնն է Հայր Աստծու հետ: Ուստի և դավանում են Հիսուսի Ծնունդը՝ որպես Աստվածհայտնություն:

վանեց և դավանում է այնտեղ ամրագրված այն ճշմարտությունը, որ Բանն Աստծո մարդացումն անճառելի հրաշք է, ինչը և կրկին հավաստում է Ս. Գրիգոր Սքանչելագործը՝ ասելով. «Արդ, Քրիստոս՝ աշխարհի Փրկիչը, իր Ծնունդը ցույց տվեց որպես նոր և չքնաղ մի դեպք...»¹: Փրկչի Ծննդյան հետ կապված իր խոսքը Սքանչելագործը եզրափակում է հույժ կարևոր մի ընդհանրացումով. «Աստված իջավ երկիր, և մարդիկ բարձրացան երկինք»²:

Հովհան Մանդակունին այսպես է մեկնում փրկագործության խորհուրդը. «Որ ըստ էության անմայր, և ըստ էության անհայր՝ եկն փրկել զարարածս: ... Արդ այլ ոք Արարիչ և Փրկիչ և կեցուցիչ իբրև զնա ոչ եղև և ոչ եղիցի և ոչ լինելոց է. բայց միայն մինն, Միածինն ի կուսէն ծնեալ Աստուած, եղեալ մարդ: Քանզի բազումք ի մարդկանէ աստուածածանօթք, աստուածատեսք, աստուածախօսք. այլ ըստ բնութեան մարդիկ կոչին, և ոչ Աստուած: Ելին ոմանք մարմնով յերկինս. սակայն և անդ մարդիկ ըստ բնութեան են, և կամ հրեշտակք, այլ ոչ եթէ Աստուած»³:

Ելնելով վերը շարադրված նյութից՝ կարելի է անել հետևյալ խիստ «ընդհանրական» եզրահանգումը, որը բխում է նախ՝ Սուրբ Գրքի և ապա սուրբ հայրերի պարզ ու հավաստի ուսուցումներից. Աստված, որ մեկ և միակն է ի հավիտենից, ժամանակների լրումին, հանուն անկյալ մարդու փրկագործության, որոշում է շնորհազեղվել սիրո պատճառով: Քանի որ Աստված սեր է (Ա Հովհ., Դ 8), Նա մեզ է շնորհում իր Միածին Որդուն, «զի եղիցուք նովաւ կենդանիք» (Ա Հովհ., Դ 9), այսինքն՝ Քրիստոսի շնորհով ու Նրա շնորհիվ փրկվենք: Եվ քանի որ Քրիստոսի տնօրինական աննախադեպ փրկագործության (խաչելության) շնորհիվ կատարվեց Աստծո արդարությունը, կամքը և Նրա անսահման սրբությունը երկրի վրա, Աստված հանուն Հիսուսի, Նրա Հարությունից և Համբարձումից

Վերև ասվածը հիմնականում վերաբերում էր Քրիստոսի Ծննդյան ընկալմանը Հայ և առհասարակ՝ Ընդհանրական Եկեղեցու կողմից, որպես ինքնին Աստվածհայտնություն: Պարզ է, որ այս ընկալումը պետք է, որ հիմքեր ստեղծեր Աստվածհայտնության տոնակատարման համար. և այդպես էլ եղել է. ինչպես նշվեց, Արևելքում մինչև IV դ. Քրիստոսի Ծննդյան տոնը կապվել է Աստվածհայտնության՝ Մկրտության տոնի հետ, որը նշվել է հունվարի 6-ին:

¹ **Գրիգոր Սքանչելագործ**, նշվ. աշխ., էջ 7:

² Նույն տեղում, էջ 10:

³ **Հովհան Մանդակունի**, Ճառք, Վենետիկ, 1860, էջ 212-213:

հետո, հաճեցավ ուղարկել Սուրբ Հոգին, որպեսզի Նրանով հաղորդություն ունենանք Հոր և Որդու հետ և ժառանգենք Աստծով մեզ տրված սուրբ և հավիտենական կյանքը: Աստված շնորհագեղվեց (հանդես եկավ Ամենասուրբ Երրորդությամբ), որպեսզի, ըստ Պողոս առաքյալի մաղթանքի՝ մեր Տէր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը մեզ հետ լինեն (Բ Կորնթ., ԺԳ 13) հավիտյան:

Փրկագործական տնօրինության առաջին հանգրվանը մարմնացյալ Բանի՝ Հիսուս Քրիստոսի Ծնունդն է և Մկրտությունը, միով բանիվ՝ Աստվածհայտնությունը:

Ինչ վերաբերում է Տոնացույցում Աստվածհայտնության տոնին, ապա այն պարունակում է լրացուցիչ հրահանգներ օրվա ներքին ծիսակարգի հերթագայության պահպանման ու կատարման համար: Սկստյալով ընդօրինակված 1278-ին թվագրվող Տոնացույցում ասվում է. «Յունուարի Ե ճրագալոյց է եւ ի Զ յայտնութիւն. Ը ար տաւնէ. Եւ եթե յառաջաւորին պահքն մտանէ, ութ արէիցն դուզ տաւնն արա եւ մի ուտեր, զի կրկին պահք է...»¹:

1292-ին թվագրվող մի ձեռագրում, որը կոչվում է «Տաւնացոյց ըստ շաբաթուց եւ սակաւ մի հարցնացոյց»², ցուցումները տրվում են Զատիկից սկսած: Ծննդյան բարեկենդանի վերաբերյալ ասվում է. «...յան գլխատնութեան պահքն յառաջ Գ ար ուտիք համարեա. Յոր զտաւնս դառնէս: Յառաջ Դաւթի եւ Յակովբու և ապա Ստեփաննոս նախավկայի. եւ ապա Պետրոսի եւ Պաւղոսի եւ ապա Յոհաննոս եւ Յակոբու եւ է սա ի դեկտեմբեր ԻԹ. Եւ ի նոյն աւուրս է յայտնութեան բարեկենդանն...»:

1314-15-ի մատյանը, որ կոչվում է «Տաւնացոյց կարգաւ»³, հրահանգում է. «Աստուածայայտնութեան աւուրն գիշերն առաջին կանոնագլխին փառք ի բարձունս. Հաւատամք եւզ գենուն փիլիսոփայքն և տան մոմեղեն ի ձեռս ամենեցուն և խունկ ածեն աղաթիւք առաջին ալէլուին»: Կա-

¹ ՄՄ, ձեռ. 759, Տաւնացոյց և հարցնացոյց, թերթ 168բ-180բ: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օ. Եգանյան, Եր., 2007, էջ 627-630:

² ՄՄ, ձեռ. 179: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Եր., 1984, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, 1984, էջ 719-724:

³ Նույն տեղում:

տարվում են նույն և հիմնական ծեսերը, սակայն դրանց հետզհետե «ագուցվում» են նոր արարողություններ ու ընթերցումներ՝ համապատասխան տոնի ոճին ու ոգուն:

Յուրաքանչյուր Տոնացույց, նայած թե որ ժամանակ է գրվել, կարիք ունի առանձին հետազոտության. ե՞րբ, ի՞նչ պարագաներում, ու՞մ կողմից են կատարվել հավելումները կամ հավելյալ ցուցումները: Բայց այստեղ նպատակն ու միտումն այլ է՝ մի ընդհանուր հայացք նետել Տոնացույցի աստիճանական զարգացման վրա և հատկապես գրանցել Աստվածհայտնությանը վերաբերող մասերը: Ընդ որում, դա դժվարին մի գործ է, քանի որ ձեռագիր մատյանների շատ տեղիներ կա՛մ անընթեռնելի են դարձել, կա՛մ ներկայանում են կիսատ, կա՛մ կորած են: Այնուամենայնիվ, հնարավոր է որոշ դիտարկումներ կատարել գեթ ուրվագծելու տոնի ծիսական մասի՝ ներկա վիճակին հասնելու անցած ճանապարհը: Ի հայտ են գալիս նոր փոխեր, մեսեղիներ, շարականներ. ճրագալույցին՝ «Ուրախացիր սրբուհի», «Խոնարհեցար ի բարձանց», Ծննդյան օրը՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի», «Այսօր բանն ի Հօրէ անմեկնելի», «Հոգիք հրեղինայն այսօր», Ծննդյան Բ, Գ, Դ, Ե, Զ, Է օրերին՝ «Որ կերպարան Հօր և արարչակից», «Աղբիւր կենաց բոլխեալ», «Այսօր Գաբրիել ցնծութեամբ», «Այսօր որ յաթոռ փառաց», «Անսկզբնական տեսիլ փառաց», «Անեղանելի բնութիւն», Ութօրէին՝ «Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար», «Ծագումն հրաշալի» և մյուս շարականները¹:

Որպես արարողակարգային և ծիսական տարրերով ու հավելյալ պատշաճեցումներով հարստացած Տոնացույցեր՝ կարելի է նշել XV դ. շատ ձեռագրեր²: Սրանցից մեկում խորագրված է «աւետարանացոյց եւ տանացոյց եւ կարգաւորութիւնք եւ հրահանգք տերունական տանից զոր եղեալ է հաստատեալ սրբոյն Սահակաց հայոց հայրապետի զոր ընկալեալ ի նման է հասուցին առ մեզ նախնիք մեր...»³: 16-րդ դարի մի Տո-

¹ Շարակնոց, Անթիլիաս, 1997:

² ՄՄ, ձեռ. 5667, 7203 (երկուսն էլ՝ 1441/41թթ.), ձեռ. 9335 Լայլն, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Եր., 1970, էջ 160-161, 482, 912:

³ ՄՄ, ձեռ. 7203, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 482:

նացույցում («տաւնացոյց ի շաբաթուց»)՝ հրահանգվում է ութօրէից հետո Հովհաննու ծննդանը, կատարել «Արեգակն արդարութեան» «իւր սարաքն»:

Հավանաբար 1526 թ. ընդօրինակված մի Տոնացույց – Ավետարանացույցն ունի բավական մանրամասն առաջաբան, որից երևում է, որ գրչի անունն է Կարապետ, որդին Ռստակեսի և Եղիսաբեթի և հոգևոր զավակը ս. Հովսեփի²: Այնուհետև տրվում են ցուցում – հրահանգներ կանոնների կատարման վերաբերյալ, այդ թվում՝ «Կանովն Աստուածայայտութեանդ ճրագալոյցին արհնութիւն» (թերթ 9ա), «Կանոն առաջին աւուր» (թերթ 10ա), «Երկրորդ աւուր» (թերթ 10բ), «Կանովն երրորդ աւուրն արհնութիւն» (թերթ 11բ), «Կանովն չորրորդ աւուրն արհնութիւն» (թերթ 13ա)³ և այլն: Ապա՝ «Կանովն ծնողացն Աստուածածին Յովակիմայ եւ Աննայի» (5ա), «Կանովն ծննդեան Սրբոյ Աստուածածնին» (6ա), «Կանովն աւետեաց Աստուածածնին» (7բ), «Կանովն Աստուածայայտութեանդ ճրագալոյցին արհնութիւն» (9ա), «Կանոն առաջին աւուր» (10ա), «Երկրորդ աւուր» (10բ), «Կանովն երրորդ աւուրն արհնութիւն» (11բ), «Կանովն չորրորդ աւուրն արհնութիւն» (13ա)⁴ և այլն:

XVI դ. մի շարք Տոնացույցներում⁵ ևս հաստատագրվում է նույն կանոնը՝ «Յունուարի 2 ծնունդ է և Յայտնութիւն տիրոջն մեր Յիսուսի Քրիստոսի..., ճրագալոյցի գիշերն զգեանուն քահանայքն միաբան եւ ելանեն ի յատեանն...»⁶, կամ՝ «Աստուածայայտութեան ճրագալոյցի առաջի աւուրն առաջին կանոնագլխին փառք հաւատամք եւ զգեանուն փիլիսո-

¹ ՄՄ, ձեռ. 3668, Յուլյակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., 1965, էջ 1061:

² Նույն տեղում, հ. Բ, էջ 1001:

³ ՄՄ, ձեռ. 9838, Յուլյակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 1001:

⁴ Նույն տեղում:

⁵ ՄՄ, ձեռ. 4874, 4459, Յուլյակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1217, 1306:

⁶ ՄՄ, ձեռ. 4459 (63բ), Յուլյակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1217:

փայքն եւ տան մոմեղէն ի ձեռս եւ յատեանն ասէն և խունկ ածէն...»¹: Տոնացույցները, որոնք կազմվել են մինչև Սիմեոն Ա Երևանցին, հիմնականում ունեն նույն ավանդական ձևակերպումները որոշ փոփոխակներով, որոնք իրենց հերթին եւ ունեն իրենց նախորինակները: Դա ևս նյութ է, առարկա մեկ այլ մանրակրկիտ հետազոտության:

Սուրբ Ծննդյան ութօրյա կանոնական և Հիսնակաց ոչ կանոնական պահքերը: Քրիստոսի Ծննդյան կամ Հայտնության պահքը հայոց եկեղեցական տարվա վերջին պահքն է: Այն սկսվում է դեկտեմբերի 30-ին և ավարտվում Ծննդյան ճրագալույցից առաջ ընկնող որևէ օր: Համաձայն Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունների, որոնք նա կատարել է մի շարք տոնացույցերի և ճաշոցների տվյալների հիման վրա, հնագույն «Կանոնք ընթերցվածոց»-ներում Քրիստոսի Ծննդյան պահքի կանոնները բացակայել են: Ծննդյան յոթնօրյա, այսինքն՝ շաբաթապահք է վկայվում Անանիա Շիրակացու մոտ: Ըստ այդմ՝ նա եզրակացնում է, որ ամենայն հավանականությամբ Սուրբ Ծննդյան պահքը սկզբնավորվել է ամենավաղը VI դ.²:

Ծննդյան շաբաթական պահքի մասին վկայում է Թադեոս առաքյալի ԻԷ կանոնը. «Ո՛րպէս կատարեսցուք զԱստուածային տօնից զկարգս» հարցմանն ի պատասխան հրահանգվում է. «Նախ պահեսցեն շաբաթ մի ի պատիւ տօնին, և ապա կատարեսցեն»³:

Ծննդյան պահքի ներկա՝ ութօրյա, տարբերակը գալիս է Գրիգոր Բ Վկայասերի (XI-XII դդ.) Տոնանամակից⁴: Սիմեոն Երևանցու կատարած խմբագրության մեջ պահպանվել է մինչ այդ ընդունված կարգը⁵:

Բացի Ծննդյան հնգօրյա պահքից, հայոց մեջ տարածված է եղել նաև Ծննդյանը նախորդող Հիսնակաց պահքը: Թե՛ արևմտյան Եկեղեցիները և թե՛ Հայ Եկեղեցին Ս. Ծննդյան տոնին սկսել են պատրաստվել յոթ շաբաթ առաջ: Հայ Եկեղեցին դեռևս դարեր առաջ տնօրինել է, որ տոնից

¹ ՄՄ, ձեռ. 587 (1618 թ.), Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի, հտ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., 2004, էջ 1399-1401:

² Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 639:

³ Ա. Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ հանդերձ կանոնագրութեամբք, Վաղարշապատ, 1874, էջ 17:

⁴ Նույն տեղում, էջ 637:

⁵ Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 638:

յոթ շաբաթ առաջ մարդիկ հոգեպես պատրաստվեն Սուրբ Ծննդյան տոնին¹: Ինչպես վկայում են հին ծիսական մատյանները (Ճաշոց, Տոնացույց, Ժամագիրք) Աստվածհայտնության տոնից առաջ սահմանված է եղել, ինչպես որ Հարությունից առաջ, հիսնօրյա պահեցողության շրջան, որը արևմտյան եկեղեցիները սկսում են Գալստյան կիրակիով (հայոց մեջ Գալստյան կիրակին Մեծ պահոց շրջանի վեցերորդ կիրակին է):

Գալստյան կիրակի օրվա հայկական շարականում բանաստեղծորեն շարադրվում է Փրկչի Գալստյան պատմությունը՝ մարգարեությունները Փրկչի Գալստյան, մարդկանց մեջ Նրա երևալու մասին: Փրկչին այցի եկավ՝ փրկելու կորուսյալին, ի տարբերություն Ադամի, որը պատվիրանագանց լինելով՝ մերկացավ փառաց պատմունճանից: Բանը մարդացավ, ծնվեց Ս. Կույսից, որով Ս. Մարիամը, Փրկչի համար սուրբ տաղավար լինելով, լուծարեց նախամայր Եվային տրված աստվածային անեծքը...: Ներկայումս նախնական հիսնօրյա պահքը “վերածված է երեք շաբաթապահքերու»²: Այս ամենի նպատակը հավատացյալ ժողովրդին խոկումների, հսկման, մաքրագործության մղելն է՝ Աստվածհայտնության տոնը արժանավորապես տոնակատարելու համար:

Հիսնակաց Բարեկենդանը կատարվում է յոթ օրերի շարժականությամբ՝ նոյեմբերի 15-ից մինչև 21-ն ընկած շրջանում³: Հնում գոյություն ունեցող այս պահքը նման էր Զատիկից առաջ եղած պահքին: Պատմական այս իրողությունից է գալիս Հիսնակաց անվանումը⁴:

Ծննդյան Մեծ պահքի մասին ցայսօր հայտնի առաջին վկայությունը թվագրվում է VI դ-ով՝ Սահակ Պարթևի անունով հայտնի, սակայն Ներսես Կաթողիկոսին և Ներշապուն եպիսկոպոսին պատկանող “Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշման վանաց» կանոնախմբի Խ կանոնում. «... Տաւն սրբոյ Յայտնութեանն, եւ քառասնորոք նորա»⁵:

Սակայն ներկայում երբեմնի հիսնօրյա պահքի այս շրջանը վերածվել է երեք շաբաթապահքերի, որոնք միմյանցից բաժանված են երկու շա-

¹ Ը. Գալուստեան, Տաղաւար տօներ, Թեհրան, 2009, էջ 13:

² Նույն տեղում, էջ 109:

³ Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1991, էջ 32:

⁴ Ը. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 14:

⁵ Հ. Աբրահամյան, Աստվածհայտնության Քառասնորոգաց (Հիսնակաց) պահքը (պատմական համառոտ ակնարկ), Երևան, 2015, ձեռագիր, էջ 1-2:

բաթներով: Առաջինը Հիսնակացն է, որ սկսվում է Ծննդյանը նախորդող 50-րդ օրվա մոտակա երկուշաբթիից: Երկրորդը Ս. Հակոբի անվամբ հայտնի պասն է, քանի որ դրան հաջորդում է Ս. Հակոբի տոնը: Երրորդը Ս. Ծննդյան ութօրյա պահքն է¹, որ միշտ սկսվում է տոնից մեկ շաբաթ առաջ, այսինքն՝ դեկտեմբերի 29-ի երեկոյան, անկախ այն բանից, թե շաբաթվա որ օրվան է այն զուգադիպում²: Ըստ ուսումնասիրությունների՝ Ծննդյան Մեծ պահքը, XIII դ. վերջերին և XIV սկզբներին տոնացույցերում և ճաշոցներում արդեն ներկայանում է ընդմիջարկված շաբաթապահքերով³:

Ամեն դեպքում վերոգրյալը վկայում է այն, որ այդ հիսնակի տարածվածությունը միանշանակ չի եղել, իսկ այն, որպես պարտադիր պահք, կանոնականացնելը կարող էր խիստ ծանրաբեռնել տարին պահքերով: Ուստի X-XI դդ. հստակեցվել են Ծննդյան պահքի կենցաղավարման շրջանակները՝ հիսնօրյան պարտադիր համարելով վանական միջավայրի, քահանաների և ապաշխարողների, իսկ ութօրյան՝ աշխարհականների համար⁴:

Ամենայն հավանականությամբ Հայ Եկեղեցին իր ծիսական առանձնահատկությունը պահելու համար քննության նյութ է դարձրել Աստվածհայտնության Մեծ պահքը պահպանելու խնդիրը: Հայ Եկեղեցին Ծննդյան Հիսնակաց պահքը երբևէ չի կանոնականացրել՝ ելնելով, հավանաբար մի քանի պատճառներից՝ տարին երեք մեծ պահքերով չծանրաբեռնելու, հավատացյալների կենցաղավարման մեջ հոգևոր և ֆիզիկական ծանրաբեռնվածություն չներմուծելու համար⁵:

Մեր կարծիքով, սակայն, այս պահքն այսօր լայն տարածում չունի նաև այն գլխավոր պատճառով, որ մեր օրերում վանականության ինստիտուտը, իր ավանդական չափանիշներին համապատասխան, բացակայում է:

Մեր տոնացույցի մեջ տեղ է գտել «Ավագ տոներ»-ի շաբաթը՝ իբրև Ս. Ծննդյան տոնի նախընթաց պատրաստություն, և համապատասխա-

¹ Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, էջ 32:

² Ը. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 14:

³ Հ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 4:

⁵ Նույն տեղում, էջ 5:

նում է զատկական Ավագ շաբաթին: Ավագ տոներով հիշատակվում է կարևոր սրբերի մի շարք, որոնց Տոնացույցը կոչում է «վկայս Ծննդեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի»¹:

Սրբերի շարքում հիշատակվում են Դավիթ Մարգարեն, Հակոբոս Տյառնեղբայրը, Ստեփանոս Նախավկան, Պետրոս և Պողոս, Հակոբոս ու Հովհաննես առաքյալները:

Ըստ Վարդան Վարդապետի՝ չորս Ավագ տոները, իբրև Սուրբ Ծննդյան նախատոնակ, կարգադրել է Հովհան Օձնեցին: «Նախատոնակ Տեառն Ծննդեան դնելով զչորս տօնն փոխանակ չորեքկերպեան Աթոռոյն եօթն հովիս կազմելով, ութերորդ վարուց մարդկան առաջնորդին՝ Յիսուսին Աստուծոյ»²:

Դավիթը հիշատակվում է այն պատճառով, որովհետև Հիսուսը ծնվում է Դավթի թագավորական ազգատոհմից (ինչպես նշված է Մատթեոսի Ավետարանի սկզբում՝ Հիսուսի ազգաբանության մեջ), նաև այն հիմնավորմամբ, որ Դավիթը Սուրբ Հոգով մարգարեացել է Օծյալի Ծննդյան, Գալստյան և կյանքի տարբեր դրվագների մասին: Հակոբոս Տյառնեղբայրը հիշատակվում է որպես Հիսուսի ազգական և Քրիստոսից հետո քրիստոնեական եկեղեցու առաջին հովվապետ: Ս. Ստեփանոսը հիշատակվում է որպես առաջին վկա, որն իր արյունը թափեց հանուն Քրիստոսի: Պողոսն ու Պետրոսը հիշատակվում են որպես Աստծո հոսքի քարոզիչներ ու տարածողներ, սյուներ՝ նախնական քրիստոնեական եկեղեցու, ինչպես նաև վկաներ, որոնք մարտիրոսացան հանուն Քրիստոսի, մեկը՝ սրահարվելով, մյուսը՝ գլխիվայր խաչվելով (ըստ սրբազան ավանդության)³:

Ամփոփելով վերոգրյալը՝ տեսնում ենք, որ Հայ Եկեղեցին հավատարիմ է մնացել Սուրբ Ծնունդը և Աստվածհայտնությունը միասնաբար հունվարի 6-ին կատարելու ավանդույթին՝ դրանով իսկ մեկ անգամ ևս ամրագրելով քրիստոսաբանական իր դիրքորոշումը:

¹ Ը. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 14:

² Ն. Պողարյան, Ծիսագիտություն, Նյու-Յորք, 1990, էջ 70:

³ Ը. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 13:

Բանալի բաներ – Տոմար, Սուրբ Ծնունդ, Աստվածադայություն, Բեթլեհեմ, Հունվարի 6, Հայ Եկեղեցի, Ս. Ծննդյան պահք, Անանիա Շիրակացի:

УТВЕРЖДЕНИЕ КАНОНА СВ. РОЖДЕСТВА И БОГОЯВЛЕНИЯ В АРМЯНСКОМ КАЛЕНДАРЕ

Геворг Гушчян

Ключевые слова: *Календарь, Св. Рождество, Богоявление, Вифлеем, Армянская церковь, 6-ое января, Пост Рождества, Анания Ширакаци.*

В статье рассматриваются календарные изменения канонов Св. Рождества и Богоявления и Водоосвящения, начиная с IV в. Вселенская Церковь за начало летоисчисления приняла дату рождения Иисуса Христа, которую некоторые церкви празднуют 25-го декабря, другие – 6-го января. Существуют разные подходы к этим датам, которые исходят из разных точек отсчета в определении дня Рождества Иисуса. Св. Рождеству, как Господскому празднику, предшествуют постные дни, разговение и предпразднство отмечаются накануне, всенощное бдение совершается накануне ночью, поминание усопших – на следующий день. Св. Рождество и Богоявление продолжается восемь дней. Пост Рождества или Явления Христа является последним постом Армянского церковного года. Он начинается 30-го декабря и заканчивается в какой-либо день перед Чрагалуйц (Св. Литургия сочельника). Сведения армянских историков и хронографов V-XVIII вв. чаще всего касаются торжества Водоосвящения, свидетельствуя о его важной роли в общественной жизни.

THE ESTABLISHMENT OF THE CANON OF NATIVITY AND BLESSING OF WATER IN THE ARMENIAN DIRECTORIUM

Gevorg Ghushchyan

Key Words: *Directorium, Nativity, Theophany, Bethlehem, Armenian Church, 6 January, fast of Nativity, Anania Shirakatsi.*

The present article discusses the developments of the Holy Birth, Theophany and Blessing of the Water calendar canons starting from the IV c.. The General Church has established the date of the Holy Birth of Christ that according to some Churches is the 25 December and to the others it is 6 January. The different dates of the Holy Birth are due to the fact that the Churches took different starting points in their reckoning. As Tabernacle feast the following celebrations precede the

Nativity of the Lord which are the Fasting, Navagatic/Consecration and Nakhatonak (i.e. before the feast), Guarding/ the Eve of Nativity Merelotz/ Paying visit to the tombs of the dead. The Nativity and the Theophany are celebrated for eight days. The fast of the Nativity of the Lord or the Epiphany is the last fasting of the church year. It starts on 30 December and finishes on any day before Jragalooytz/ Lucermarium. The V-XVIII cc works of Armenian historians and contemporaries present the commemorations mainly concerning the feast of Blessing of the Water, emphasizing its significance and role in the social life.